Արշավի հիմնական պայմանները

1. Ընդհանուր դրույթներ

Սույնով (այսուհետ «Առաջարկ») սահմանվում են **Visa C360** արշավի (այսուհետ, «Արշավ») պայմաններն ու կանոնները: Մասնակցելով Արշավին՝ Դուք հայտարարում եք, որ ամբողջությամբ և անվերապահ ընդունում եք Առաջարկի սույն պայմանները:

Սույն Առաջարկը համարվում է մարքեթինգային միջոցառում:

2. Կազմակերպիչ

2.1 Արշավը իրականացվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից (հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան **26/1, conversebank.am):**

2.2 Արշավն անցկացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

3. Արշավի ժամկետ

3.1 Արշավի վերաբերյալ հայտարարությունը տեղադրված է Բանկի կայքում **(https://conversebank.am/hy/blog)** և վերջինիս սոցիալական էջերում:

3.2 Արշավն անցկացվում է **2024** թվականի սեպտեմբերի **23**-ից՝ ժամը **00:01**-ից մինչև **2024** թվականի նոյեմբերի **23**-ը՝ **23:59:** Արշավի պայմանները նկարագրված են Առաջարկի **5**-րդ բաժնում:

3.3 Արշավի գլխավոր մրցանակի (Էլեկտրական շարժիչով մեքենա) հանձնումն իրականացվելու է Միջոցառման շրջանակում՝ **2024**թ.-ի մինչև դեկտեմբերի **18**-ը: Գումարային մրցանակ ստացող Մասնակիցները կտեղեկացվեն զանգի և **SMS** հաղորդագրության միջոցով: Արշավի ամփոփումից հետո **15** (տասնհինգ) օրվա ընթացքում կապի հաստատման անհնարինության դեպքում (Հաճախորդի չպատասխանելու, անհասանելի լինելու, Բանկին սխալ/թերի տվյալներ հաղորդած լինելու կամ այլ) Արշավի արդյունքները տվյալ Հաճախորդի համար համարվում են ուժը կորցրած:

3.4 Սույն Առաջարկում նշված ցանկացած ժամանակ պետք է համարվի Երևանի ժամանակը:

4. Արշավի մասնակիցներ

4.1 Ֆիզիկական անձ, ՀՀ ռեզիդենտ **18** տարին լրացած հաճախորդներ (ողջ տեքստում՝ Հաճախորդ/ներ), որոնք յուրաքանչյուր անգամ մեկ կամ մի քանի գործարքներով **30,000** ՀՀ դրամի գործարքների ծավալ ապահովելու դեպքում և գործարքների ծավալով յուրաքանչյուր **360**-րդ մասնակիցը հնարավորություն կունենան ստանալու ստորև Աղյուսակում նշված մրցանակներից մեկը, մասնակցելու են արշավին: Արշավի մասնակից կարող են հանդիսանալ Կոնվերս Մոբայլ **(Converse Mobile)** օգտատեր, **C360 NEO, C360 ULTRA** և **C360 ELITE** Բանկային ծառայությունների փաթեթների շրջանակներում գործող Վիզա **(VISA) (C360 Visa Classic, C360 Visa Gold, C360 Visa Platinum)** քարտապանները:

4.2 Արշավին չեն կարող մասնակցել Կազմակերպչի աշխատակիցները և իրենց հետ փոխկապակցված անձինք:

5. Արշավին մասնակցելու կանոններ

5.1 Եթե Հաճախորդը գրանցված է **Converse Mobile**-ում, հարկավոր է կատարել նվազագույնը (ներառյալ մեկ կամ մի քանի գործարքներ) **30,000** ՀՀ դրամ գումարի չափով գործարքներ: Յուրաքանչյուր **360**-րդ տեղը (գործարքների ծավալով) զբաղեցրած մասնակիցը հնարավորություն կունենա ստանալու **6.2** Աղյուսակում նշված մրցանակներից մեկը:

5.2 Արշավին մասնակցության համար հաշվի չեն առնվում քարտից այլ հաշվին կատարվող փոխանցումները, կոմունալ վճարումները (ներառյալ հեռահաղորդակցման, ինտերնետ ծառայությունների վճարները), հաշիվների, քարտերի, էլեկտրոնային դրամապանակների համալրումները, վարկի մարումները, խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների, վիրտուալ խաղատների և խաղադրույք ընդունող ընկերությունների հաշիվների համալրումները, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուրքերը, տուգանքները, օրենքով պարտադրված հարկերի վճարները, ՀՀ պետական բյուջե ուղղված այլ վճարները և Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնությունները, ինչպես նաև ցանկացած գործարք, որի գծով կատարվել է գումարի վերադարձ **(chargeback)**: Բանկը պատասխանատվություն չի կրում **POS** տերմինալների խափանման (այդ թվում՝ կապի)/անսարքության պատճառով չիրականացված կամ ոչ պատշաճ իրականացված, կամ **E-POS** տերմինալներով չիրականացված կամ ոչ պատշաճ իրականացված անկանխիկ գործարքների համար:

5.3 Բանկը հաղթող մասնակիցներին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի իրականացնում և մրցանակը չի փոխարինում այլ նվերով:

5.4 Բանկն իրավունք ունի հրաժարվել մրցանակներ տրամադրելուց, եթե Արշավի մասնակիցը կամ վերջինիս կողմից կատարված գործարքները չեն համապատասխանում Արշավի պայմաններին:

6. Հաղթողների սահմանում

6.1 Հաղթողների ընդհանուր թիվը՝ յուրաքանչյուր **360**-րդ մասնակիցը՝ մրցանակների քանակին համապատասխան:

6.2 Մրցանակների ցանկն է.

N°	Մրցանակներ
1-ին հաղթող **(360**-րդ տեղ՝ գործարքների ծավալով**)**	Էլեկտրական մեքենա **/**Գլխավոր մրցանակ
2-11-րդ հաղթող **(**յուրաքանչյուր հաջորդ **360**-րդ տեղը գործարքների ծավալով**)**	Թվով **10** գումարային մրցանակ՝ **360** ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ
12-րդ և ավել	Արշավին մասնակցող յուրաքանչյուր **360**-րդ մասնակիցը կստանա խրախուսական մրցանակ բրենդավորված հուշանվերների տեսքով

6.3 Արշավի**,** մրցանակների տրամադրման մանրամասների**,** հանձնման ամսաթվի**,** ժամի և վայրի մասին տեղեկացնելու համար Բանկը կապ է հաստատում Հաղթողների հետ հեռախոսով**/** կարճ հաղորդագրության **(SMS-**ի**)** միջոցով**:** Բանկը կստանա կամ կպահանջի միայն այնպիսի անձնական տվյալներ**,** որոնք անհրաժեշտ են համարում մրցանակը տրամադրելու և շուկայավարման նպատակներով օգտագործելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և Բանկի գաղտնիության քաղաքականության**:** Հաճախորդների անձնական տվյալների վրա տարածվում է Բանկի գաղտնիության քաղաքականությունը**:** Մասնակցելով Արշավին՝ մասնակիցը համաձայնում է Արշավի բոլոր պայմաններին**:**

6.4 Մրցանակի հետ կապված այլ՝ սույն Պայմաններով չնախատեսված ծախսերը կատարվում են հաղթողի կողմից**:** Մրցանակը տրվում է **«**այնպես**,** ինչպես կա**»:**

6.5 Բանկի հաղորդակցման տվյալները

Մանրամասների և հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի **conversebank.am** ինտերնետային կայք

- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել **+374 10 511211** հեռախոսահամարով
- **Email՝ info@conversebank.am**
- **WhatsApp ՝ +374 95 511211**
- **Skype ՝ conversebank-callcenter**

Բանկը վերահսկվում է Կենտրանական բանկի կողմից